ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF
THE REPUBLIC OF ARMENIA
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԿԱՐՈՒԹՅՈՒՆ | CONSULAR DEPARTMENT

№ 1108-2/54181-24
10.10.2024

HETQ.am-ի լրագրող
Անյա Սարկիսովային
Էլ. փոստ՝ annya.sarkisova@gmail.com

Հարգելի՛ տիկին Սարկիսովա,

Ի պատասխան Ձեր 08.10.2024թ. ՀՀ արտաքին գործերի նախարարություն հասցեագրված հարցմանը հայտնում ենք հետևյալը.

1. ՀՀ-ում գործող օտարերկրյա պետությունների դեսպանությունների կողմից մուտքի վիզաների տրամադրումը հանդիսանում է «Հյուպատոսական կապերի մասին Վիեննայի կոնվենցիայի» 5-րդ հոդվածով սահմանված հիմնական գործառույթներից մեկը, որն իրականացնելիս դեսպանություններն առաջնորդվում են իրենց երկրների օրենսդրությամբ, հետևաբար, նախարարությունն իրավասու չէ միջամտելու ՀՀ քաղաքացիներին մուտքի վիզա տրամադրելու որոշումների կայացման գործընթացին:

2. Նախարարությունը ՀՀ քաղաքացիներից երբեմն ստանում է դիմումներ՝ կապված վիզա ստանալու հարցում աջակցելու, վիզան մերժված լինելու, ինչպես նաև ժամադրություն ամրագրելու դժվարությունների վերաբերյալ:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 746-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության կանոնադրության 11-րդ կետի 17-րդ ենթակետով, որպես նախարարության գործառույթ, սահմանված է, որ նախարարությունն աջակցում է ՀՀ պաշտոնատար անձանց և պաշտոնական պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններ այցելությունների կազմակերպմանը: Այլ դեպքերում, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը միջնորդություն չի ներկայացնում:

3. Վիզային գործընթացների մասով նախարարությունը միջամտելու կամ վերահսկողություն իրականացնելու իրավասություն չունի:

Այնուամենայնիվ, հիմք ընդունելով ՀՀ գործող միջազգային պայմանագրերում ամրագրված նորմերը և կանոնները, ցանկացած պատեհ

Էլեն Առուստամյան
Վիզաների բաժնի կցորդ
Հեռ. 060620553
Էլ. փոստ՝ e.arustamyan@mfa.am

առիթով, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը տարբեր մակարդակներով գործընկերների հետ քննարկումներում բարձրացնում է խնդրո առարկա թեման՝ հատկապես ժամադրության օր ամրագրելու խնդիրը լուծելու, սահմանված կարգով ՀՀ քաղաքացիների կողմից ճամփորդական այցելությունների համար վիզա ստանալը դյուրացնելու և ընդհանուր առմամբ իրավիճակը բարելավելու նպատակով:

Հարգանքով՝

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Recoverable Signature

X

ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ARTUR 1805790179

ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ